Պարոն/Տիկին ______ *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ ի գիտություն

*Մ. Մեսրոպյան*______

«14» 07 2026թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակիցների անունները, ազգանունները՝**
   1) Աշոտ Ուլիխանյան:
2. **Զբաղեցրած պաշտոնները՝**
   1) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ:
3. **Գործուղման վայրը և ժամկետները** – Ավստրիա, քաղաք Վիեննա, 2026 թվականի հուլիսի 7-10-ը:
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)** - Միջազգային էներգետիկ գործակալություն:
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)** – Եվրոպական Միությունը հանուն էներգետիկայի (EU4Energy) ծրագրի շրջանակներում կազմակերպվող էներգետիկ անվտանգության և դիմակայունության վերաբերյալ հարցերի երրորդ փուլի առաջին քաղաքականության ֆորումին մասնակցություն:
6. **Քննարկված թեմաները (հարցերը)** – էներգետիկ անվտանգության և դիմակայունության վերաբերյալ երրորդ փուլի քաղաքականության ֆորումին Հայաստանի Հանրապետությունը մասնակցում էր ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի և ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչներից կազմված պատվիրակությամբ: Ֆորումի ընթացքում ծանոթացանք՝

- համաշխարհային նավթի և գազի շուկաների 2026 թվականի հիմնական զարգացումներին, հեռանկարներին, էներգետիկ անվտանգության վրա աշխարհաքաղաքական լարվածության և մատակարարման խափանումների ազդեցությանը, էներգետիկ շուկաների համար ի հայտ եկող ռիսկերին և անորոշություններին,
- նավթի և գազի համաշխարհային առևտրում ծովային կրկտիկական անցման կետերի դերին, էներգետիկ շուկաների և առևտրային հոսքերի վրա Հորմուզի նեղուցի խափանումների ազդեցությանը, ծովային կրկտիկական անցման կետերով մատակարարումների խափանումների կառավարման հարցերին՝ վերաուղղորդման, ճկունության և արտակարգ իրավիճակներին արձագանքման միջոցով և էներգետիկ անվտանգության ու շուկայի կայունության տեսանկյունից դրանց հետևանքներին,
- էներգետիկ անվտանգության պահպանման գործում կարևորագույն էներգետիկ ենթակառուցվածքների դերին, էներգիայի մատակարարման շղթաներում և ենթակառուցվածքային ցանցերում ի հայտ եկող ռիսկերին, Մերձավոր Արևելքում վերջին հարձակումներից և ռուս-ուկրաինական պատերազմից քաղված դասերին, էներգետիկ անվտանգության, պատրաստվածության և ապագա դիմադրողականության պլանավորման հարցերին,
- արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և ճգնաժամային արձագանքման գործում տվյալների դերին, էներգետիկ անվտանգության և դիմադրողականության մոնիթորինգի հիմնական ցուցանիշներին, նավթի և գազի մատակարարման անվտանգության գնահատման համար տվյալների պահանջներին, տվյալների հավաքագրման, թափանցիկության և տեղեկատվության փոխանակման ամրապնդման հարցերին:
- էներգետիկ անվտանգության տեսանկյունից ռազմավարական պաշարների հարցերին և դրանց պահպանման համակարգերի դերին, արտակարգ իրավիճակներում ռազմավարական պահուստների բացթողնման համակարգման և ճգնաժամերի ժամանակ անխափան մատակարարման ապահովման հարցերին, վերջին մատակարարման խափանումներից քաղված դասերին և կոլեկտիվ գործողությունների իրականացման հարցերին,
- էներգետիկ ճգնաժամերի ժամանակ պահանջարկի կողմի դիմադրողականության, էլեկտրաէներգիայի պահանջարկի կառավարման, կարևորագույն ծառայությունների առաջնահերթության սահմանման, պահանջարկի արձագանքման, ճկունության գործիքներին և սպառողների մասնակցության ընդլայնման հարցերին,

▪ էներգետիկ դիմադրողականության վերաբերյալ Ուկրաինայից քաղված դասերին, կլիմայի նկատմամբ դիմադրողականությանը և էներգետիկ ոլորտի պլանավորման, ներդրումային որոշումների կայացման գործում դրա դերին, էներգիայի պահուստավորման, ցանցային աջակցության ծառայությունների միջոցով արտակարգ իրավիճակներին պատրաստվածության բարձրացման հարցերին:

Այցելություն կատարեցինք «Wien Energie» ընկերության կողմից շահագործվող թափոնների այրման կայան, որը տարեկան մոտ 270 000 տոննա կենցաղային թափոն է մշակում՝ կանաչ ջեռուցում և էլեկտրական էներգիա արտադրելու համար: Այն ներկայացվեց որպես գործնական օրինակ, թե ինչպես տեղական էներգիայի աղբյուրները և շրջանային ջեռուցման ենթակառուցվածքները կարող են ուժեղացնել քաղաքային էներգետիկ դիմադրողականությունը:

7. Հանդիպումները, ելույթները – այցի ընթացքում հանդիպումներ և քննարկումներ ունեցանք ինչպես Միջազգային էներգետիկ գործակալության ներկայացուցիչների, այնպես էլ հրավիրված տարբեր երկրների ներկայացուցիչների հետ: Էներգետիկ ճգնաժամերի ընթացքում պահանջարկի դիմադրողականության հարցերի քննարկումների շրջանակում ելույթով հանդես եկավ նաև Հայկական պատվիրակության ներկայացուցիչը:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները – այցի ընթացքում ձեռքբերվեց պայմանավորվածություն Եվրոպական Միությունը հանուն էներգետիկայի ծրագրի երրորդ փուլի շրջանակներում շարունակել հետագա աշխատանքները, առաջացող խնդիրների հետ կապված ըստ անհրաժեշտություն կիսվել միմյանց փորձով, փոխանակվել անհրաժեշտ տեղեկատվությամբ և մասնակցել ծրագրի շրջանակում կազմակերպվող հաջորդ հանդիպումներին:

Գործուղվող՝

Ա. Ուլիխանյան ----------

(ստորագրությունը, ամսաթիվը)

14.07.2026

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 532-ՀՆ, 06.07.2026թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ՝ **Աշոտ Ուլիխանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Վիեննա /Ավստրիա/**

5. Գործուղման ժամկետները **07.07.2026-10.07.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Աշոտ Ուլիխանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)		-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (Ճանապարհածախս՝ օդանավակայանից հյուրանոց)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0.00	-

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 13.07.2026թ.